14 վագոն պտուղբանջարեղեն:

ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՆՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԱՐՑԱԽՈՒՄ

Հիմք ընդունելով ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման մասին հայտնի որոշումը, Արցախում ստեղծվել է Հայպետնախագիծ ինստիտուտի կոմպլեքսային հարտարապետական բաժանմունք:

Բաժանմունքը տեղավորված է Ստեփանակերտ քաղաքում և սկսել է իր գործնական աշխատանքները: Նրան հանձնարարված է պատրաստել մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերը, նախատեսվող բնակարանային և քաղաքացիական բոլոր տեսակի շինությունների հարտարապետական նախագծերը, մարզի կառուցապատման նախագծերը:

ԿՈՄԻՏԱՍՑԻՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասախոսական և ուսանողական կոլեկտիվները երկու տարի է, ինչ ջերմ կապերի մեջ են Արցախ աշխարհի երաժշտասեր հասարակայնության հետ: Արցախ կատարվող նրանց այցելությունները արդեն դարձել են բարի ավանդույթ:

Կոնսերվատորիայի պրոֆեսոր, երաժշտագետ Արմեն Բուդաղյանի գլխավորությամբ համերգային մի խումբ՝ կազմված կոնսերվատորիայի դասախոսներից և ուսանողներից, օրերս հանդիպումներ ունեցավ Ստեփանակերտ քաղաքի և մարզի մի շարք տնտեսություններում և հիմնարկ-ձեռնարկություններում:

Արցախյան երաժշտասերների վրա մեծ տպավորություն թողեցին անդրկովկասյան մրցույթի դափնեկիր, դաշնակահար Սեդրակ Երկանյանի և դաշնակահարուհի Թամար Հովհաննիսյանի կատարումները: Առանձնապես արտակարգ էր Սեդրակ Երկանյանի կատարմամբ Հարություն Դելալյանի «Նվիրում Կոմիտասին» սոնատը, Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետից պարային համարները:

Հանդես գալով Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի և Կոմիտասի անվան երաժշտական դպրոցներում, կոնսերվատորիայի համերգային խումբը, որպես հուշանվեր, արվեստի դպրոցին նվիրեց քանոն, իսկ երաժշտական դպրոցին՝ քառ:

Ուր էլ լինում են կոմիտասցիները, ընդունվում են մեծ ջերմությամբ ու գոհունակությամբ: Խումբը մի քանի օր շեֆական համերգներով հանդես կգա նաև մարզի գյուղերում:

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԵՐԵԿՈ՝ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայ դասական երաժշտության հիմնադիր մեծ Կոմիտասի ծննդյան 120-ամյակին նվիրված երեկոն արտակարգ հաջողությամբ անցավ Ստեփանակերտի Կոմիտասի անունը կրող մանկական երաժշտական դպրոցում:

Դպրոցի տնօրեն, կոմպոզիտորների միության ԼՂԻՄ-ի բաժանմունքի նախագահ, վաստակավոր արտիստ Էդվարդ Ղազարյանցը իր բացման խոսքում նշեց Կոմիտասի դերը հայ ժողովրդի հակատագրական պայքարում: Հետաքրքիր ու բովանդակալից էր գրական-երաժշտական կոմպոզիցիան՝ նվիրված Կոմիտասի կյանքին ու գործունեությանը: Այնուհետև՝ դպրոցի ուսանողների ու աշակերտների կատարմամբ հնչեցին կոմիտասյան երգեր ու պարեր: Երեկոն ավելի հագեցրին Երևանի պետական կոնսերվատորիայից ժամանած հյուրերը, որոնք նույնպես հանդես եկան կոմիտասյան երգով:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ